

DOI: 10.57192/18291864-2022.4-271

Արամ Ս. Սայիյան  
Պատրմ. գիրք. թեկնածու

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՄԲԵՐԸ  
ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ  
(1919-1923 ԹԹ.)\***

**Բանալի բառեր** – Մուսթաֆա Քեմալ, «Բարաքուլ», «Համզա», Ֆեյզի Չաքմաք փաշա, «Թեշքիլաթ-ը Մահսուսա», «Ասքերի փոլիս», «Թեթքիք», «Գեշիթ»:

Մուտք

1918 թ. հոկտեմբերի 30-ին Օսմանյան կայսրության պատվիրակության ղեկավար, ռազմածովային նախարար Ռաուֆ Օրբայը Լեմնոս կղզու Մուդրոսի ծովախորշում խարիսխ նետած բրիտանական «Ազամեմնոն» ռազմանավի վրա ստորագրում է անձնատվության (կապիտուլյացիայի) ակտը: Երկիրը կառավարող «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, որի ղեկավարները դաշնակիցների կողմից պատերազմի դեռ առաջին ամիսներին հռչակվել էին պատերազմական հանցագործներ, հրաժարվում է իշխանությունից:

Կուսակցության ղեկավարության մի մասը ձերբակալվեց անգլիացիների կողմից և արքտրվեց Մալթա, սակայն մեծամասնությանը հաջողվեց անցնել Կենտրոնական Ասատուլիա և տեղերում կազմավորել ռազմական ուժեր՝ Անտանտի և նրա դաշնակիցների ռազմական ներխուժման դեպքում դիմադրություն կազմակերպելու նպատակով: Երիտթուրքական կուսակցության լուծարման

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 28.12.2022:

Վլէմ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2022

հետ մեկտեղ իր գործունեությունը դադարեցրեց նաև նրա հատուկ ծառայությունը՝ «Թեշքիլաթ-ը Մահսուսա»-ն:

Թեև «Իթթիհատի» առաջնորդները լքել էին երկիրը, բայց պահպանվել էին «Թեշքիլաթ-ը Մահսուսա»-ի նահանգային վարչությունները, օսմանյան բանակի Գլխավոր շտաբը, բանակների և կորպուսների շտաբները, ոստիկանությունն ու ժանդարմերիան՝ իր տարածքային վարչություններով, ինչպես նաև վիլայեթների վարչակազմերը, որոնց անդամների մեծ մասը երիտթուրքական կուսակցության անդամներ էին: Ահա այս բարձրաստիճան սպաներն ու պաշտոնյաներն էին, որ չընդունեցին Մուդրոսի զինադադարը և դաշնակիցների գրաված վիլայեթներում գաղտնաբար կազմակերպում էին տեղական ուժերը:

### 1. Առաջին հետախուզական կազմակերպությունները

Մուդրոսի զինադադարից մինչև հանրապետության հռչակումը (1923 թ. հոկտեմբերի 29) ընկած ժամանակահատվածում թուրքական հատուկ ծառայությունները ներկայանում էին գլխավորապես գաղտնի կազմակերպությունների տեսքով: Դրանք ստեղծվում էին հիմնականում հետախույզ սպաների ջանքերով և շատ դեպքերում գործում էին ինքնուրույն: Նման պայմաններում «Թեշքիլաթ-ը Մահսուսա»-ի սպաները սկսեցին կազմավորել հետախուզադիվերսիոն ջոկատներ: Դրանցից ամենահզորն ու ամենաազդեցիկը կոչվում էր «**Քարաքոլ**» («Պարեկ»): Հիմնական պատճառն այն էր, որ սուլթանական կառավարությունը գտնվում էր հաղթանակած տերությունների վերահսկողության տակ, իսկ քեմալական շարժումը դեռ նոր էր ծավալվում: Բացի այդ՝ Մ. Քեմալն այդ կազմակերպությունների նկատմամբ ուներ անվստահություն՝ դրանք դիտարկելով որպես Անտանտի երկրների կողմից ներդրված կառույցներ, կամ էլ, ի դեմս նրանց, իր իշխանության համար վտանգավոր մրցակիցներ էր տեսնում:

Ընդունված է, որ «Քարաքոլը» ստեղծվել է 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երբ պարտությունից կարճ ժամանակ առաջ էնվերն ու Թալեաթը հրամայում են ստեղծել գաղտնի կառույցներ, որոնք պետք է գործեին դաշնակիցների գրաված տարածքներում:

Իսկ որպես կազմակերպության ստեղծման պաշտոնական ամսաթիվ նշվում է 1919 թ. փետրվարի 5-ը, երբ Ստամբուլում հանդիպում են «Քարաքոլի» հիմնադիր անդամները:

Շատ կարճ ժամանակ անց, երբ Մուսթաֆա Քեմալն Անատոլիայում սկսեց իր ազգայնական շարժումը, «Քարաքոլի» սպաների մեծ մասը միացավ այդ շարժմանը: Կազմակերպությունն օգնում էր նրան՝ մատակարարելով սպառազինություն, ինչպես նաև զբաղվում էր Կոստանդնուպոլսից և դաշնակիցների գրաված այլ տարածքներից դեպի Անատոլիա սպաների փոխադրման գործով: Սակայն հետագայում՝ Քեմալի իշխանության ամրապնդմանը զուգահեռ, խորացան հակասությունները նրա և «Քարաքոլի» ղեկավարության միջև: Հատկապես վճռորոշ նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ Քեմալը ի դեմս «Քարաքոլի» տեսնում էր նրա հիմնադիրների՝ իր քաղաքական հակառակորդներ Թալեաթ և Էնվեր փաշաների ազդեցության մեծացումն ազգայնական շարժման վրա, ինչպես նաև այն, որ այս գաղտնի կազմակերպության սպաները հանդես էին բերում անկախություն. ինքնուրույն հանդիպումներ էին ունենում ռուս բոլշևիկների հետ՝ մեծացնելով նրանց ազդեցությունը և դժվարացնելով Անտանտի երկրների հետ խաղաղության պայմանագրի կնքումը: 1920 թ. սկզբին «Քարաքոլը» հայտնվում է մի կողմից քեմալականների, մյուս կողմից էլ՝ դաշնակիցների ու նրանց հլու կամակատար սուլթանական կառավարության ճնշումների տակ: Վերջնական հարվածը հասցնում են դաշնակիցները, որոնք, 1920 թ. մարտի 16-ին գրավելով Կոստանդնուպոլիսը, ձերբակալում են «Քարաքոլի» ղեկավարների մեծ մասին և արքորում Մալթա կղզի<sup>1</sup>:

**«Ասքերի Նիգեհբան»** («Askeri Nigehban») կամ, ինչպես նշվում է օսմանյան պաշտոնական փաստաթղթերում, «Նիգեհբան Ջեմիեթ-ի Ասքերիեթի» («Nigehban Cemiyet-i Askeriyesi», «Զինվորական ոստիկանություն») զինվորական կազմակերպությունը ստեղծվել է 1919 թ. հունվարի 7-ին Ստամբուլում: Հիմնադիրներն էին գեներալ Ռեֆիկ բեյը, հրետանու մայոր Իսմայիլ Հաքքը Էֆենդին, կայմական Ֆեթ-

1 Նկատի ունենալով «Քարաքոլ» գաղտնի կազմակերպության մասին Գևորգ Պետրոսյանի մանրամասն ուսումնասիրությունը՝ այդ կառույցին անդրադարձել ենք հպանցիկ: Ավելի մանրամասն տես **Պետրոսյան Գ.**, «Միջանկյալ» հետախուզություն. «Քարաքոլի» դերը քեմալական շարժման և թուրքական հետախուզության ձևավորման մեջ, էջ 123-136, <http://ysu.am/files/4-1540535981-.pdf> (մուտք՝ 26.12.2022):

թահ բեյը և այլ երևելի սպաներ: Կազմակերպության ծրագիրը տպագրվել է նույն օրը ստամբուլյան «Ալեմդար» թերթում: Ըստ այդ ծրագրի, որին հավանություն էր տվել Դամադ Ֆերիդ փաշան, արգելվում էր կազմակերպության անդամներին զբաղվել քաղաքականությամբ, իսկ նրանք, ովքեր կխախտեին այդ կետը, կհեռացվեին գինվորական ծառայությունից<sup>2</sup>: Չնայած դրան՝ կազմակերպության անդամները հանդես էին գալիս իթթիհատականների ու քեմալականների դեմ և իրենց քաղաքական հայացքներով համակրում էին «Հյուրիեթ վե իթիյաֆ» կուսակցությանը: Եվ եթե մեծ վեզիր Թևֆիկ փաշան հանդես էր գալիս «Աքերի Նիգեհբան»-ի դեմ, իսկ ռազմական նախարար Ջևաթ փաշան նույնիսկ դատական հետապնդում էր սկսել, ապա հաջորդ՝ իթիյաֆական մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշայի կողմից կազմակերպությունն օգնություն էր ստանում՝ վայելելով նրա վստահությունը: Նա այդ կազմակերպությանը Ռազմական նախարարության կենտրոնական հրամանատարության համալիրում տրամադրել էր մի ամբողջ ջենթ<sup>3</sup>:

«Նիգեհբան»-ի ստորաբաժանումները կռվում էին Մուսթաֆա Քեմալի «Քուվվա-ի Միլլիե» բանակի դեմ: Կազմակերպության ղեկավար կազմը 1919 թ. սեպտեմբերի 25-ին խնդրագիր է հղում մեծ վեզիրին, որում հայտնում է, որ իրենք հավատարիմ են սուլթանին և պատրաստ են իրենց շարքերում եղած երեք հազար մարտիկներով կռվելու Մ. Քեմալի ազգայնական շարժման դեմ, որին նրանք համարում էին հանցագործ ցանց<sup>4</sup>: Փաստացի «Աքերի Նիգեհբան»-ը դարձել էր Ստամբուլում իշխող «Հյուրիեթ վե իթիյաֆ» կուսակցության ռազմական թևը և ծառայում էր Դամադ Ֆերիդ փաշային:

1919 թ. վերջերին Քեմալի ազդեցության մեծացմանը զուգահեռ թուլանում էր Դամադ Ֆերիդ փաշայի իշխանությունը: Հոկտեմբերի 2-ին նա ստիպված էր հրաժարական տալ: Նոր մեծ վեզիր Ալի Ռիզա փաշան բացասաբար էր տրամադրված «Աքերի Նիգեհբան»-ի նկատմամբ, ուստի կազմակերպության ղեկավարությունը հարկա-

2 Տե՛ս **ERTAN T. F.**, Nigehban Cemiyet-i Askeriyesi, <https://ataturkansiklopedisi.gov.tr/bilgi/nigehban-cemiyetiaskeriyesi/#:~:text=Nigehban%20Cemiyet%2Di%20Askeriyesi%2C%20%E2%80%9CAskerlerin%20Bek%C3%A7ileri%E2%80%9D%20anlam%C4%B1n%C4%B1%20ta%C5%9F%C4%B1maktad%C4%B1r> (մուտք 12.10.2022):

3 Տե՛ս նույն տեղում:

4 Տե՛ս **Çimen A.**, Askerî Nigehban Cemiyeti Kimdir? <http://www.sessiztarih.net/2020/06/askeri-nigehban-cemiyeti-kimdir.html> (մուտք 25.11.2022):

դրված փոխում է անվանումը՝ կոչելով այն «Կարմիր դաշույնի ընկերություն»<sup>5</sup>:

Ժամանակակից թուրքական պատմագրության մեջ «Ասքերի Նիգեհրան»-ը մեղադրվում է բրիտանացիների հետ համագործակցության և քեմալականների դեմ տարբեր վայրերում ապստամբությունների հրահրման մեջ: Նրանք ակտիվ էին Քարաբիղիում և Բանդըրմայում, որտեղ հաջողության հասնելու դեպքում, ըստ քեմալական քարոզչության, իբր ծրագրում էին ոչնչացնել Տրապիզոնի և Սամսունի քրիստոնյաներին, որպեսզի հող նախապատրաստեին այդ տարածքներ Անտանտի զորքերի մուտքի և այդպիսով քեմալական շարժման ջախջախման համար:

1920 թ. նիգեհրանականներն օգնում էին Քեմալի դեմ Դյուզջեում ապստամբած ուժերին, որոնք հիմնել էին «Քուվվա-յը Ինզիբաթիե» կազմակերպությունը: Սակայն նույն թվականին քեմալական «Քուվվա-յը Միլլիե»-ի ուժերին հաջողվում է պարտության մատնել ապստամբներին: Կազմակերպությունն անցնում է ընդհատակ և շարունակում իր հակաքեմալական գործունեությունը: 1922 թ. կազմակերպությունը նորից փոխում է իր անվանումը՝ կոչվելով «Նեջաթ վե Իթիլա Ջեմիեթի» («Փրկություն և մեծարում»), սակայն արդեն երկրի լիիրավ տերը դարձած Մուսթաֆա Քեմալը կարողանում է արագորեն չեզոքացնել այս կազմակերպությունը, իսկ նրա անդամները բանտարկվում են:

Հաջորդ գաղտնի հետախուզական կազմակերպությունը «Ջաբիթանն» («Սպայական») էր: Այն ստեղծվել է 1920 թ. հոկտեմբերի 27-ին՝ լուծարված «Քարաքոլի»՝ ազատության մեջ գտնվող սպաների կողմից և, փաստորեն, դրա շարունակությունն էր: Նոր խումբն անգամ օգտագործում էր «Քարաքոլի» կնիքը<sup>6</sup>: Հիմնադիրը Սկյուտարի բաժանմունքի պետ, փոխգնդապետ Մուղլալը Մուսթաֆա բեյն էր: «Ջաբիթանը» շարունակում էր նախորդի գործը՝ Անատոլիա ուղարկելով թե՛ սպառազինություն և թե՛ սպաներ: Սակայն ինչպես «Քարաքոլի» դեպքում, այս կազմակերպության գոյությանը ևս դեմ էր Մ. Քեմալը, որն արդեն ստեղծել էր «Ֆելահ» և «Համզա»

5 Տե՛ս Ertan T. F., նշվ. աշխ., էջ 2:

6 Տե՛ս Polat A. O., Teşkilat ı Mahsusadan MİT'e, MİT'in 56 Yıllık Tarihçesi, <https://www.tgrthaber.com.tr/aktuel/teskilat-i-mahsusadan-mite-mitin-56-yillik-tarihcesi-2763725> (մուտք՝ 20.12.2022):

խմբերը<sup>7</sup>: «Զարիթանի» հեղինակությանը ծանր հարված հասցվեց հատկապես այն բանից հետո, երբ պարզվեց, որ Անատոլիա ուղարկված սպաների մեջ կային նաև Անտանտի գործակալներ: Դրանցից էր, մասնավորապես, ազգությամբ հնդիկ Մուսթաֆա Սագիրը, որը «Զարիթանի» կնիքով փաստաթղթով ժամանել էր Անկարա: 1920 թ. դեկտեմբերի 11-ին նա ձերբակալվում է՝ մեղադրվելով անգլիացիների հանձնարարությամբ Մ. Քեմալին սպանելու մտադրության մեջ: Անկախության դատարանի դատավճռով 1921 թ. մայիսի 23-ին Մուսթաֆա Սագիրը մահապատժի է ենթարկվում<sup>8</sup>: Սակայն չի բացառվում, որ հնդիկ սպայի ձերբակալությունն ու մահապատիժը Մուսթաֆա Քեմալի կազմակերպած սադրանքն էր, որն ուներ «Զարիթանին» հեղինակազրկելու նպատակ:

1921 թ. փետրվարին Մուղլալը Մուսթաֆա բեյը ստիպված է լինում փոխել խմբի անվանումը և կոչել այն «**Յավուզ**» («Ահեղ»): Նա ընտրում է նաև նոր զինանշան, որի վրա պատկերված էր սուլթան Սելիմ Ահեղը (Յավուզ): Քեմալական բանակի շտաբի պետ, մարշալ Ֆեզի Չաքմաք փաշային ուղարկած իր նամակները Մուղլալը բեյը կնքում էր այդ կնիքով<sup>9</sup>: Փոխզնդապետը հավաքում է նոր անձնակազմ և խմբի աշխատանքը դարձնում ավելի արդյունավետ: Սակայն նույն՝ 1921 թ. գրանցվում է հերթական ձախողումը, որը ծանր հարված է հասցնում խմբի հեղինակությանը: 1921 թ. մարտի 12-ին ավիամերձ Սարըյար կոչվող տեղանքում բրիտանացիներին հաջողվում է առգրավել խմբի թաքստոցում եղած 570 «Մաուզեր» հրացանները, 4 գնդացիք և 10 արկղ զինամթերք, որոնք պետք է ուղարկվեին Անատոլիա: Ակնհայտ էր, որ «Յավուզ»-ում կային ինչպես բրիտանական գործակալներ, այնպես էլ Դամադ Ֆերիդ փաշայի կառավարության ենթակայության տակ գործող հատուկ ծառայության՝ «Ասրերի Նիզեհիբան»-ի անդամներ<sup>10</sup>: Ի վերջո, երկյուղելով բրիտանացիների կամ օսմանյան կառավարության կողմից ձերբակալվելուց, Մուսթաֆա բեյը Ստամբուլից տեղափոխվում է Անա-

7 Stü Güney R., Osmanlı'nın Son Döneminden Cumhuriyet Dönemine İstihbarat Teşkilatlarının Tarihi Süreçleri Ve Polis İstihbarat Tarihi, s. 20, Kırıkkale Üniversitesi / Sosyal Bilimler Enstitüsü, Kırıkkale (Yayınlanmamış Yüksek Lisans Tezi), Kırıkkale, 2008:

8 Stü Altıay K., Cumhuriyet Dönemi İstihbarat Örgütleri, s. 24, Manisa, 2013:

9 Stü Gürel A., Türk İstihbarat Birimlerinin 1880 Sonrası Gelişimi ve Derin Devlet Yapılanmaları, s. 68, <https://dergipark.org.tr/en/download/article-file/2573218> (ünitng 26.12.2022):

10 Stü Karan K., Türk İstihbarat Tarihi, s. 82, Truva Yayınları, İstanbul, 2008:

տողիա և դառնում Քեմալի հրամանատարներից մեկը: Այդպիսով կազմակերպությունը դադարում է գոյություն ունենալուց:

## 2. Քեմալականների ստեղծած հետախուզական կազմակերպություններն ու խմբերը

1920 թ. ապրիլ ամիսը վճռորոշ եղավ թուրքական հատուկ ծառայությունների համար: Այն բանից հետո, երբ մարտի 16-ին Կոստանդնուպոլիսը գրավվեց դաշնակիցների կողմից, նրանց հիմնական ուժերը կենտրոնացվեցին Մուսթաֆա Քեմալի ձեռքերում: Օսմանյան խորհրդարանը, կառավարությունը և սուլթանական արքունիքը հայտարարելով պատանդ Անտանտի տերությունների ձեռքերում՝ նա ստեղծեց սեփական խորհրդարանը (Թուրքիայի Ազգային մեծ ժողով (ԹԱՄԺ)) և կառավարությունը: Բնականաբար, պատերազմի ժամանակ առաջին հերթին նա իրեն ենթարկեց հետախուզական բոլոր խմբերը՝ դրանց հիմքի վրա ստեղծելով քեմալական առաջին հետախուզական կազմակերպությունները: Այն խմբերը, որոնք հրաժարվեցին ենթարկվելուց, ցրվեցին, ինչպես, օրինակ, «Յավուզը»:

Քեմալական առաջին հետախուզական կազմակերպություններից կարելի է նշել «Համզան», որը ստեղծվել է 1920 թ. սեպտեմբերի 23-ին Ստամբուլում՝ օսմանյան բանակի Գլխավոր շտաբում, որտեղ Մ. Քեմալն արդեն ուներ շատ մեծ ազդեցություն: «Համզան» էապես տարբերվում էր նախորդ կազմակերպություններից և արդեն նման էր դասական հետախուզական ծառայության: Այս խումբը, ինչպես նախորդները, ստեղծվել էր Կոստանդնուպոլսից դեպի Անկարա սպառազինություն և սպաներ տեղափոխելու նպատակով: «Համզայի» հիմնադիրը փոխգնդապետ Նեշեթ Բորա բեյն էր: Նա խումբը ստեղծելուց կարճ ժամանակ անց Ստամբուլից մեկնում է Անկարա և հանդիպում Մուսթաֆա Քեմալի ու Գլխավոր շտաբի պետ Իսմեթ Ինյոնյուի հետ, որը շարադրում է խմբից իրենց սպասելիքները, այն է՝ սպաների և սպառազինության տեղափոխում Անկարա և հունական բանակի ու լրտեսների մասին տեղեկությունների հավաքում: Խումբն ուներ հինգ բաժին: Առաջին բաժինը պատասխանատու էր հետախուզության, ռադիոհեռարձակման և քա-

րոզչության, ինչպես նաև հունական բանակի տեղաշարժի մասին տեղեկությունների հավաքման և գործակալների ուսուցման համար: Երկրորդ բաժինը պատասխանատու էր տեղեկատվության տեխնիկական ապահովման համար (փոստ, հեռագրատուն, սուրհանդակային կապ), իսկ երրորդ բաժինը զբաղվում էր կադրային հարցերով: Չորրորդ բաժինը պետք է զբաղվեր սպառազինության հայթայթմամբ, դրա՝ դեպի Անատոլիա փոխադրմամբ և զինագործների որոնմամբ: Հինգերորդը մատակարարման բաժինն էր: Գլխավոր շտաբի պետ Ի. Ինյոնյուին 1920 թ. դեկտեմբերի 1-ին ուղարկված զեկուցագրում «Համգայի» ղեկավարությունը նշում էր, որ երկուսուկես ամսվա ընթացքում Ստամբուլից Անկարա են ուղարկվել 40 սպա, 50 գնդացի և 2 մարտկոց՝ իրենց պահեստամասերով<sup>11</sup>: Որոշ ժամանակ անց, սակայն, «Համգայի» գաղտնաբառերի՝ բրիտանացիների ձեռքն ընկնելու, իսկ հետո էլ Անկարայից Կոստանդնուպոլիս ուղարկված փոստային պայուսակի կորելու պատճառով նրա ղեկավարությունը ստիպված էր նույն թվականի դեկտեմբերի 15-ին կազմակերպության անվանումը փոխել «**Մոջսահեդ**»: 1921 թ. փետրվարի 23-ին խումբը նորից փոխեց իր անվանումը՝ կոչվելով «**Մուհարիփ**»: Սակայն այս անվանումն էլ երկար չգործեց, և 1921 թ. օգոստոսի 31-ին խումբը ստացավ «**Ֆելահ**» անվանումը<sup>12</sup>:

«Ֆելահի» կենտրոնակայանը գտնվում էր Ստամբուլի Բոսթանջի թաղամասում՝ բրիտանական բանակի հնդկական բրիգադի շտաբից ընդամենը 300 մետր հեռավորության վրա: Կազմակերպության ուշագրավ հաջողություններից էին Մուսթաֆա Քեմալի ազգայնական շարժման մեջ Դամադ Ֆերիդ փաշայի հատուկ ծառայության ներդրած գործակալների ցանկի ձեռքբերումը (Գլխավոր շտաբին ուղարկված 1922 թ. հոկտեմբերի 27-ի 6244-րդ զեկուցագիրը)<sup>13</sup> և կապիտան Քեմալի մուտքը ֆրանսիական շտաբ, որի շնորհիվ քեմալական Գլխավոր շտաբը ստանում էր կարևոր տեղեկություններ ֆրանսիական զորքերի մասին: Ընդհանուր առմամբ խումբն Անատոլիա է ուղարկել 2512 տոննա սպառազինություն և բազմաթիվ սպաներ<sup>14</sup>: Ստամբուլից Անկարա խմբի կապը պահպանվում էր

11 Տե՛ս Güney R., նշվ. աշխ., էջ 22:

12 Տե՛ս Altıay K., նշվ. աշխ., էջ 27:

13 Տե՛ս Karan K., նշվ. աշխ., էջ 81:

14 Տե՛ս Güney R., նշվ. աշխ., էջ 23:



գլխավոր կոմիսար Սալիհ և Արևմտյան ռազմաճակատի շտաբի պետ Սաֆֆեթ բեյերի միջոցով: Անկարայի միջնաբերդում խմբի ջանքերով ստեղծվել էր ռադիոհեռախոսության կետ, որը թշնամի զորքերի մասին կարևոր տեղեկություններ էր տրամադրում Գլխավոր շտաբին<sup>15</sup>: Լոզանի պայմանագրի ստորագրումից հետո, երբ արդեն մի քանի հեռախոսական կազմակերպությունների գործունեության կարիքը չկար, «Ֆելահ» խումբը 1923 թ. հոկտեմբերի 4-ին լուծարվեց<sup>16</sup>:

«Ֆելահ» խմբի ծովային սպաները 1921 թ. մարտին ստեղծում են իրենց խումբը, որը կոչվում էր «Մուավենեթ-ի Բահրիե» («Ծովային օգնություն»): Նրա գործունեությունը կոորդինացվում էր «Ֆելահի» կողմից, և այն փաստացի վերջինիս ռազմածովային մասնաձյուղն էր: Բացի ծովային սպաներից՝ խմբում ընդգրկված էին նաև նավակավարներ և ռազմական նավահանգիստների բանվորներ: Նրանց ջանքերով Ոսկեղջյուրի հրվանդանում խարիսխ գցած օսմանյան ռազմանավերի վրայից հանվել էր սպառազինությունը և ուղարկվել Անատոլիա: Իր գործունեության ընթացքում խումբը 48 շոգենավերով Անատոլիայի նավահանգիստներ է ուղարկել 138 տոննա կշռով 1421 միավոր սպառազինություն: «Մուավենեթ-ի Բահրիե»-ն դադարեցնում է իր գործունեությունը նույն թվականի դեկտեմբերի կեսին<sup>17</sup>:

«Ֆելահ» և «Մուավենեթ-ի Բահրիե» խմբերի հետ սերտորեն համագործակցում էր դեռևս 1920 թ. մարտի 19-ին (այսինքն՝ դաշնակիցների կողմից Ստամբուլի գրավումից 3 օր անց) Բոսֆորի առափնյա ծանր հրետանու պետ Էյուբ բեյի ստեղծած «Իմալաթ-ի հարբիե» («Ռազմական արդյունաբերություն») խումբը: Վերջինս Ստամբուլի ռազմական գործարաններից ապամոնտաժում էր հաստոցներ, պահեստներից դուրս էր բերում ռազմական պատրաստի արտադրանք կամ հումք և նշված երկու խմբերի օգնությամբ դրանք ուղարկում Անատոլիա: Խնդիրը կատարելուց հետո «Իմալաթ-ի հարբիե» խմբի սպաները 1920 թ. դեկտեմբերին տարհանվեցին Անկարա, որտեղ էլ միացան «Ֆելահ» խմբին<sup>18</sup>:

15 Տե՛ս Altay K., նշվ. աշխ., էջ 27:

16 Տե՛ս Çukurova B., Kurtuluş Savaşında Haberalma ve Yeraltı Çalışmaları, s. 35, Ardic Yayınları, Ankara, 1994:

17 Տե՛ս Çağlak A., Milli Mücadelede Marbuat ve İstihbarat Müdüriyet-i Umumiyesi (Yüksek Lisans Tezi), s. 65, Ankara, 2011:

18 Տե՛ս Güney R., նշվ. աշխ., էջ 25:

Պետք է նշել, որ թուրքական բանակի Գլխավոր շտաբի պետ<sup>19</sup> Իսմեթ Ինյոնյուի հրամանով «Համզա» և «Ֆելահ» խմբերի հետ միաժամանակ ստեղծվում են «Ֆերհաթ» («Ուրախություն») և «Քերիմի» («Բարեպաշտ») խմբերը (1921 թ. մարտի 2): Առաջին խմբի ղեկավարներն էին Գլխավոր շտաբի սպաներ փոխգնդապետ Մուսթաֆա Իզզեթը և կապիտան Մեհմեդ բեյը, իսկ «Քերիմի» խումբը ղեկավարում էր փոխգնդապետ Հայրի բեյը: Այս խմբերը պահեստային տարբերակներ էին: «Ֆերհաթը» պետք է փոխարիներ «Համզա» և «Ֆելահ» խմբերին դրանց ձախողման դեպքում, իսկ իր տապալման դեպքում նրան փոխարինելու էր «Քերիմի» խումբը՝ առանց թանկարժեք ժամանակը կորցնելու: Շարժման ողջ ընթացքում դրանք ոչ մի գործողություն չկատարեցին, այլ միայն հետևում էին զարգացող իրադարձություններին<sup>20</sup>:

Հաջորդ գաղտնի կազմակերպությունը «Ասքերի փոլիս»-ն էր («Զինվորական ոստիկանություն»): Այն ստեղծվել է 1920 թ. հուլիսի 18-ին Գլխավոր շտաբի պետ Ի. Ինյոնյուի հրամանով Արևմտյան ռազմաճակատում և հակահետախուզական գործունեություն էր ծավալում<sup>21</sup>: Զինվորական ոստիկանությունը պատկանում էր ռազմական նախարարությանը: Պաշտոնական գրագրության մեջ այն նշվում էր «P» կամ «AP» տառերով: Կառույցի հրամանատարն էր մայոր Իսմայիլ Հաքքըն (Ալփան)<sup>22</sup>: Զինվորական ոստիկանությանը տրվեցին շատ լայն լիազորություններ: Նրա սպաներն իրավունք ունեին ստուգելու ցանկացած զինվորականի և քաղաքացիական անձի: Առանց նրա թույլտվության ոչ ոք իրավունք չունեի թշնամիների (հույների, բրիտանացիների, ֆրանսիացիների և իտալացիների) գրաված տարածքներից մուտք գործելու Քեմալի վերահսկողության տակ գտնվող տարածքներ: Նրա սպաները պայքարում էին նաև բնակչության շրջանում և բանակի շարքերում թշնամի երկրների հատուկ ծառայությունների ծավալած քարոզչության դեմ: Զինվորական ոստիկանության պարտականությունների շրջանակում էր

19 1920 թ. մայիսի 3-ից մինչև 1921 թ. օգոստոսի 21-ը Գլխավոր շտաբի պետի պաշտոնը զբաղեցրել է Իսմեթ Ինյոնյուն, իսկ 1921 թ. օգոստոսի 5-ից մինչև 1944 թ. հունվարի 12-ը՝ Ֆեզի Չաքմաքը:

20 Տե՛ս Güney R., նշվ. աշխ., էջ 24:

21 Տե՛ս Pehlivanlı H., Kurtuluş Savaşı İstihbaratında Askeri Polis Teşkilatı, s. 6, Genelkurmay Basımevi, Ankara, 1992:

22 Տե՛ս Askeri Polis Teşkilatı, s. 1, <https://ataturkansiklopedisi.gov.tr/bilgi/askeri-polis-teskilati/?pdf=3839> (մուտք 12.11.2022):

նաև գրավված տարածքներից և Ռուսաստանի սևծովյան շրջաններից ձեռք բերված սպառազինության տեղափոխումը Անատոլիա<sup>23</sup>: Կառույցի կենտրոնակայանը Էսփիշեհիք քաղաքն էր<sup>24</sup>: Սկզբնական շրջանում այն բավականին արդյունավետ էր կատարում իր գործառույթները, սակայն հետագայում առաջացան դժվարություններ քաղաքացիական ոստիկանության (ներքին գործերի նախարարություն) և զինվորական ոստիկանության լիազորությունների սահմանազաման հարցում: Ի վերջո որոշվեց, որ զինվորական ոստիկանությունը գործելու էր ռազմաճակատային գծում, սակայն իրավունք չէր ունենալու սահմանափակելու խաղաղ բնակչության իրավունքները, մասնավորապես՝ արգելելու լքել պատերազմական գոտիները: Իսկ մնացած վայրերում գործելու էր քաղաքացիական ոստիկանությունը, սակայն եթե քրեական գործում ներգրավված էին զինվորականներ, ապա այդ գործի քննությունն անցնում էր զինվորական ոստիկանությանը: 1922 թ. ԹԱՄԺ որոշ պատգամավորներ ցանկացան օրինագիծ ընդունել, որով այս երկու կառույցները կմիավորվեին, սակայն երկար քննարկումներից հետո առաջարկությունը մերժվեց:

Զինվորական ոստիկանության ամենահայտնի և հաջողված ռազմագործողությունը 1920 թ. հոկտեմբերին Ստամբուլի մասնաձյուղի իրականացրած հարձակումն էր Ոսկեղջյուրի Սյուլյուջե շրջանի Քարաաղաջ բնակավայրում տեղակայված զինապահեստների վրա, որի հետևանքով հաջողվեց դաշնակից զորքերի՝ Մուդրոսի զինադադարից հետո թուրք զինվորներից առգրաված սպառազինությունը խլել և ուղարկել Անատոլիա<sup>25</sup>:

Հետագայում Մուսթաֆա Քեմալը սկսեց Զինվորական ոստիկանությունն օգտագործել սեփական իշխանությունն ամրապնդելու համար: Չարաշահելով իր լիազորությունները՝ կազմակերպությունը սկսում է գաղտնալսել այն բարձրաստիճան սպաներին և ԹԱՄԺ-ի՝ Քեմալին ընդդիմադիր պատգամավորներին, որոնցից Քեմալն իրական վտանգ էր զգում: Հսկողության տակ էր անգամ Գլխավոր շտաբի պետ Իսմեթ Ինյոնյուն, որը ստեղծել էր այդ կառույցը: ԹԱՄԺ պատգամավորներից Հաքքը Բեհիչ և Հաջը Շյուքրյու բեյերը խորհրդարանի ամբիոնից բողոքեցին այս փաստի դեմ, ինչին ի պատասխան՝ Մ. Քե-

23 Տե՛ս Pehlivanlı H., նշվ. աշխ., էջ 16:

24 Տե՛ս Karan K., նշվ. աշխ., էջ 170:

25 Տե՛ս նույն տեղում, էջ 83:

մալը հայտնեց, որ այդ հարցով արդեն գրավոր դիմում է ուղարկել Արևմտյան ռազմաճակատի հրամանատարին<sup>26</sup>: Պետք է նշել, որ այդ ժամանակ Քեմալի իշխանությունը դեռ ամուր չէր, իսկ խորհրդարանում ընդդիմությունը բավական ազդեցիկ էր, ինչն էլ ստիպեց Քեմալին գաղտնիությունը չպահպանելու և իր լիազորությունները չարաշահելու մեղադրանքների հիման վրա 1921 թ. մարտի 21-ին լուծարել Զինվորական ոստիկանությունը: Սակայն ընդամենը 10 օր անց՝ ապրիլի 1-ին, դրա հիմքի վրա ստեղծվեց նոր կառույց՝ **«Թերթիք Հեյեթ-ի Ամիրլիքլերի»** («Քննչական կոմիտե»)։ Փաստացի Մ. Քեմալը, կրճատելով աշխատակիցների և բաժանմունքների թիվը, շարունակեց Զինվորական ոստիկանության գործունեությունն այլ անվամբ: Նոր կառույցը գործում էր Զինվորական ոստիկանության կազմակերպական պարտականությունների կանոնակարգի համաձայն<sup>27</sup>:

Կառույցի հիմնական պարտականություններն էին ազգային փոքրամասնությունների, հատկապես՝ հույների դեմ պայքարը, կոմունիստական կուսակցության անդամների բացահայտումը և չեզոքացումը, լրտեսության, ինչպես նաև բնակչության այն հատվածի դեմ պայքարը, որը համակրում էր օսմանյան կառավարությանը<sup>28</sup>:

1922 թ. հունիսի 22-ին Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Իսմեթ Ինյոնյուի հրամանով «Թերթիք Հեյեթ-ի Ամիրլիքլերի»-ն լուծարվեց, որի վերաբերյալ կա երկու վարկած: Ըստ առաջինի՝ «Թերթիք»-ը լուծարվել է իր բազմաթիվ աշխատակիցների բացահայտման պատճառով<sup>29</sup>, իսկ ըստ երկրորդի՝ լուծարման պատճառ է դարձել ֆինանսավորման սղությունը<sup>30</sup>:

1921 թ. գարնանը Քեմալը և իր շրջապատը, վերլուծելով Ստամբուլում գործող տարբեր գաղտնի խմբերի ու կազմակերպությունների գործունեությունը, եկան այն եզրակացության, որ պետք է ստեղծել մի կառույց, որին կենթարկվեին այդ բոլոր խմբերը, և այդպիսով նրանց աշխատանքը կդառնար ավելի համակարգված ու արդյունավետ: Ընդ որում, այդ կառույցի ղեկավար կազմը պետք է բաղկացած լիներ կադրային հետախույզներից կամ ոստիկաններից, որոնք կարող էին պայքարել բրիտանական հետախուզության դեմ: Մ. Քեմալի խորհրդով

26 Տե՛ս Altıay K., նշվ. աշխ., էջ 35:

27 Տե՛ս Karan K., նշվ. աշխ., էջ 191:

28 Տե՛ս İltis E., Milli İstihbarat Teşkilatı Tarihçesi, s. 15, MİT Basımevi, Ankara, 2002:

29 Տե՛ս նույն տեղում:

30 Տե՛ս Altıay K., նշվ. աշխ., էջ 37:

Ֆեզի փաշան դիմում է Սամսունում գտնվող «Թեշքիլաթ-ը Մահսուսա»-ի վերջին ղեկավար Հյուսամեթթին Էրթյուրքին՝ խնդրելով նրան ղեկավարել այդ նոր կառույցը: Վերջինս համաձայնում է և, մարտի 25-ին ժամանելով Անկարա, սկսում նոր կազմակերպության՝ «Մյուսելլահ Մյուդաֆա-ի Միլլիե» («Ազգի զինված պաշտպանություն»), ստեղծման աշխատանքները: Պետական փաստաթղթերում այն նշվում էր «**Mim Mim grubu**» («Միմ Միմ խումբ») անվամբ: Պաշտոնապես կառույցի հիմնադրման ամիսը համարվում է ապրիլը: Էրթյուրքը կարողանում է Ստամբուլում ներգրավել իր ծանոթ հետախույզներին և անվտանգության այլ մարմինների աշխատակիցների: Խմբի հիմնական խնդիրն էր համակարգել մյուս խմբերի աշխատանքը, ծավալել ինչպես հակահետախուզական, այնպես էլ հետախուզական գործունեություն, տանել քարոզչություն բնակչության շրջանում և պայքարել թշնամական քարոզչության դեմ: Դրան զուգահեռ՝ նա պետք է շարունակեր Անատոլիա ուղարկել սպաներ և սպառազինություն:

Կարձ ժամանակ անց կառույցի ղեկավար է նշանակվում Անկարայից ուղարկված Սուվարի Էսաթ բեյը: Ամենայն հավանականությամբ, Մ. Քենալը չէր վստահում «Թեշքիլաթ-ը Մահսուսա»-ի նախկին ղեկավարին՝ երկյուղելով Ստամբուլում նրա հեղինակության աճից, այդ իսկ պատճառով կառույցի համակարգված աշխատանքները սկսվելուց հետո նա հեռացրեց Էրթյուրքին այդպիսի ազդեցիկ կազմակերպության ղեկավարի պաշտոնից:

1921 թ. մայիսի 3-ին ԹԱՄԺ-ը հաստատեց «Մյուսելլահ Մյուդաֆա-ի Միլլիե»-ի գործունեությունը<sup>31</sup>: Կարձ ժամանակ անց կառույցը դարձավ Ստամբուլի ոչ պաշտոնական ղեկավարը, որին ենթարկվում էին քաղաքի ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական ոստիկանության բաժինները: Ստամբուլը բաժանվել էր երեք շրջանների՝ Թոփքափը, Բեյազիթ և Էմինոնու, որոնցում տեղակայված խմբի զինված անդամները լիովին վերահսկում էին դրությունը դաշնակիցների կողմից գրավված քաղաքում:

Կազմակերպությունը կատարեց շատ մեծ ծավալի աշխատանք: Բացահայտվեցին բազմաթիվ գործակալներ, միննույն ժամանակ նրան հաջողվում էր սեփական գործակալներին ներդնել դաշնակիցների գործերի շտաբներում և դեսպանատներում՝ արժեքավոր տեղեկու-

31 Տես նույն տեղում, էջ 31:

թյուններ ուղարկելով Անկարա: Կառույցը պայքարում էր նաև կոմունիստների դեմ<sup>32</sup>:

«Մյուսելլահ Մյուդաֆա-ի Միլլիե»-ն շարունակեց իր գործունեությունը մինչև 1923 թ. հոկտեմբերի 5-ը, որից հետո նրա շատ աշխատակիցներ ԹԱՄԺ-ի կողմից արժանացան մեղալների: 1922 թ. դեկտեմբերին թուրքական բանակը հույների դեմ տարած հաղթանակից հետո մոտեցել էր Ստամբուլին, սակայն քեմալական ռազմաքաղաքական դեկավարությունը երկյուղում էր, որ քաղաքը և Թրակիան նորից կարող էին հարձակման ենթարկվել նեղուցների մոտ տեղակայված բրիտանական զորքերի կողմից: Գլխավոր շտաբի պետ Ֆևզի Չաքմաքի հրամանով առաջին բանակի հրամանատարությունը ստեղծում է «**Գեչիթ**» կազմակերպությունը, որի պարտականությունն էր հետևել բրիտանացիներին և բոլոր միջոցներով տեղեկություն հայթայթել հարձակման մասին: Բուն Ստամբուլը կազմակերպությունը բաժանել էր 5 գոտիների՝ 1. **Սերքյոփրյու** (Ռումելի Հիսար, Իսթինիե, Սարըյեր), 2. **Ա** գոտի (Աբդուռահման Գազի), 3. **Ս** գոտի (Սկյուտար), 4. **Հ** գոտի (Անադոլու Հիսար), 5. **Բ** գոտի (Բեյքոզ)<sup>33</sup>:

Լոզանի հաշտության պայմանագրի կնքումից (1923 թ. հուլիսի 24) մի քանի օր անց՝ օգոստոսի 8-ին, «Գեչիթ» կազմակերպությունը լուծարվեց:

Իհարկե, ամեն ինչ չէ, որ հարթ էր ընթանում քեմալականների համար. հաճախ հայտնվում էին մարդիկ, որոնք աշխատում էին հետախուզական գործունեության անվան տակ գումար շորթել: Այդպիսին էր, օրինակ, «**Նամըք**» խումբը, որը ստեղծել էր Ստամբուլում ծանր հրետանու սպա Հալիլ Իբրահիմը իր եղբոր՝ Ահմեդ Նաջիբեյի հետ: Նրանց Ստամբուլ էր ուղարկել Անկարայի կառավարությունը՝ Անատոլիա հրետանային արկեր ուղարկելու հանձնարարությամբ: Այդ նպատակով նրանց տրվել էին անհրաժեշտ գաղտնաբառերը և երկու հազար լիրա: Սկզբնական շրջանում նրանք Ստամբուլից Ինեբոլու են ուղարկում ութ հազար հրետանային արկ, սակայն երկրորդ անգամ, արդեն ստանալով կանխավճար, այդպես էլ չեն ուղարկում զինամթերքի նոր խմբաքանակներ: Քեմալական կառավարությունը նրանց նկատմամբ հետաքննություն է սկսում<sup>34</sup>:

32 Տե՛ս İler E., նշվ. աշխ., էջ 15:

33 Տե՛ս Güney R., նշվ. աշխ., էջ 34:

34 Տե՛ս Çağlak A., նշվ. աշխ., էջ 66:

Լոզանի պայմանագրի կնքումից հետո այս բոլոր հատուկ խմբերն ու կազմակերպությունները ցրվեցին: Հետախուզության, հակահետախուզության և քարոզչության գործառույթներն իրականացնում էր թուրքական բանակի Գլխավոր շտաբի հետախուզական վարչությունը: Այս իրավիճակը պահպանվեց մինչև 1926 թվականը, երբ ստեղծվեց **Ազգային անվտանգության ծառայությունը** (Milli Emniyet Hizmeti (MEH)), և նշված գործառույթները փոխանցվեցին նրան:

<b>Քենալական շարժման շրջանի գաղտնի հետախուզական խմբերը/կազմակերպությունները</b>	
«Իմալաթ-ը հարբիե» («Ռազմական արդյունաբերություն»)	Ստամբուլ (19.03.1920–16.12.1920)
«Քարաքոլ» («Պարեկ»)	Մուդրոսի զինադադարից հետո օսմանյան և քենալական կառավարությունների վերահսկողության տակ մնացած տարածքներ (հոկտ.-նոյ. 1918–16.03.1920)
«Զաբիթան» («Սպայական»)	Ստամբուլ (27.10.1920–հուն.-փետր. 1921)
«Ցավուզ» («Ահեղ»)	Ստամբուլ (1921 փետր.-սեպտ.)
«Համզա» (հատուկ անուն)	Ստամբուլ (23 սեպտ.-15 դեկտ. 1920)
«Մուջահիդ» («Հավատի մարտիկ»)	Ստամբուլ (15.12.1920–23.02.1921)
«Մուհարիփ» («Պայքարող»)	Ստամբուլ (23.02.1921–31.08.1921)
«Ֆելահ» («Փրկություն»)	Ստամբուլ (31.08.1921–04.10.1923)
«Մուավենեթ-ի Բահրիե» («Ծովային օգնություն»)	Ստամբուլ (մարտ 1921–15.12.1921) <sup>35</sup>
«Գեչիթ» («Գետանցում»)	Ստամբուլ (դեկտ. 1922–օգոս. 1923)

35 Տե՛ս İlter E., նշվ. աշխ., էջ 16:

«Նամրք» (հատուկ անուն)	Ստամբուլ (30.01.1921-???)
«Ֆերհաթ» («Ուրախություն»)	Անկարա (02.03.1921-???)
«Քերիմի» («Բարեպաշտ»)	Անկարա (02.03.1921-???)
«Ֆերիհե դենիզ» («Նվաճված ծով»)	Ստամբուլ (16.03.1921-???)
«Ասերի փուլիս» («Զինվորական ոստիկանություն»)	Մուսթաֆա Քեմալի վերահսկողության տակ գտնվող ողջ տարածքում (18.07.1920-21.03.1921)
«Մյուսելլահ Մյուդաֆա-ի Միլլիե» («Ազգի զինված պաշտպանություն»)	Ստամբուլ (փետր. 1921-05.10.1923)
«Թեթթիք Հեյեթ-ի Ամիրլիք-լերի» («Քննչական կոմիտե»)	Մուսթաֆա Քեմալի վերահսկողության տակ գտնվող ողջ տարածքում (01.04.1921-22.06.1922)

### Եզրակացություններ

Ամփոփելով վերն ասվածը՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Առաջին աշխարհամարտի ավարտից մի քանի ամիս առաջ, կանխազգալով մոտալուտ պարտությունը, երիտթուրքերն իրենց վերահսկողության տակ գտնվող վիլայեթներում ստեղծում են հետախուզական խմբեր ու զենքի պահեստներ: Այդ խմբերը պետք է դառնային դիմադրություն կազմակերպողները և բնակչությանը նախապատրաստեին ապստամբության:
2. Մուդրոսի զինադադարից հետո՝ մինչև քեմալական շարժման սկիզբը, օսմանյան նախկին բանակի և հատուկ ծառայությունների շատ սպաներ ստեղծում են խմբեր, որոնցից ամենահզորը՝ «Քարաքոլը», հասնում է լուրջ հաջողությունների:
3. Իր գլխավորած շարժման սկզբնական փուլում Մուսթաֆա Քեմալը ստիպված էր համագործակցել այդ կառույցների հետ, սակայն սեփական իշխանության ամրապնդմանը զուգահեռ դրանք միացնում է իր ստեղծած հատուկ կազմակերպություններին կամ էլ դադարեցնում է դրանց գործունեությունը:



4. Ելնելով պատերազմական իրավիճակից՝ քեմալական հատուկ կազմակերպությունները ենթարկվում էին բանակի հրամանատարությանը և ավելի շատ նման էին ռազմական հետախուզական կառույցների, ինչն ուներ թե՛ դրական և թե՛ բացասական կողմեր:
5. Մ. Քեմալը այդ հետախուզական կառույցներն օգտագործում էր ոչ միայն արտաքին թշնամու, այլև իրեն ընդդիմադիր ուժերի դեմ՝ ավելի ամրապնդելով իր դիրքերը:
6. Մ. Քեմալը և բանակի հրամանատարությունը ամեն նոր խմբի ստեղծման հետ ավելի էին հմտանում հետախուզական գործունեության մեջ, և ազգայնական շարժման վերջում այդ խմբերն արդեն բավականին ազդեցիկ ուժ էին ներկայացնում, որոնք ունակ էին ծավալելու հետախուզական գործունեություն բրիտանացիների, ֆրանսիացիների և հույների զորքերում ու դեսպանատներում:

**Արամ Ս. Սայիյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է Թուրքիայի 1920–1930–ական թթ. պատմության հիմնահարցերը, մասնավորապես՝ քրդական ապստամբությունների և թուրք-քրդական ու հայ-քրդական հարաբերությունների պատմությունը: Զբաղվում է նաև Թուրքիայում ազգային փոքրամասնությունների հանդեպ գործադրվող քաղաքականության ուսումնասիրությամբ:

Էլ. հասցե՝ aramsayyan@mail.ru

**THE TURKISH INTELLIGENCE ORGANIZATIONS AND GROUPS  
DURING THE YEARS OF KEMALIST MOVEMENT (FROM 1919 TO 1923)**

Aram S. Sayiyan  
*Candidate of Historical Sciences*

**Key words** – Mustafa Kemal, "Karakol", "Hamza", Fevzi Chakmak Pasha, "Teşkilat-ı Mahsusa", "Askeri Polis", "Tetkik", "Geçit".

This article presents the history of the creation and the activities of Turkish special services and groups in the Ottoman Empire from 1919 to 1923. After the war, special groups began to operate in the vilayets not yet occupied by the allies. Among these groups, the most powerful was Karakol, which existed for almost a year and a half, and ceased to exist on March 16, 1920, when the Entente troops occupied Istanbul and arrested the leaders of the organization. The officers of "Karakol" who remained at large, headed by Lieutenant Colonel Muglalı Mustafa Bey, formed the "Officers' Group", and in February of 1921 he was forced to change the name of the organization to "Yavuz". In the end, Mustafa Bey, in order not to be captured by the British, leaved Istanbul for Ankara and the group ceased to exist. In addition to these groups, there were other secret organizations in Istanbul and Anatolia that acted independently.

In May of 1919, Mustafa Kemal started his nationalist movement in Anatolia, and most of these groups joined him. He, in turn, created his own intelligence groups, which had two main tasks: the fight against an external enemy and the fight against the opposition. The fight against the external enemy was carried out in several directions: the transfer of the officers and the weapons from the occupied territories to Anatolia, the fight against the hostile propaganda, espionage and the implementation of intelligence against them. As a result, in 1921 Kemal owned all intelligence organizations and groups. The duties of the Hamza and Felah groups included the transportation of the weapons and the officers from Istanbul to Ankara and intelligence activities in the capital and other regions of Turkey occupied by the Entente. And the Muavenet-i Bahriye organization, created by the naval officers of the Ottoman fleet, was able to dismantle 1,421 weapons weighing 138 tons from warships and send them to Anatolia.

In the spring of 1921, M. Kemal and Chief of the General Staff Fevzi Chakmak Pasha decided to create a new organization that would coordinate the activities of all secret groups in Istanbul. The new group, Musella Mudafa-i Millie, was in full control of the situation in occupied Istanbul. And after the victory over the Greeks in the fall of 1922, Fevzi Pasha created the Gechit group, which monitored the movements of the British troops.

An equally important task was the creation of a strong counterintelligence organization, which became Askeri Polis - the Military Police. This organization fought not only with the British agents, but also with the national minorities and the communists. But soon Kemal began to use the organization to spy on senior officers and members of parties opposed to him. After being exposed in parliament, Kemal was forced to close the group under a fictitious pretext, but after 10 days, on its basis, he founded a new organization - Tetkik Heet-i Amirlikleri, which was also dissolved after some time.

Summarizing the above facts, we can say that after several failures during the first period of the war, in the last phase there were already several special organizations that could quite successfully fight against the British intelligence and maintain their influence both in the entire areas of Istanbul and in many regions of Asia Minor occupied by the allies. These Turkish intelligence structures, created during the Turkish-Greek War, later became the basis for the creation of the National Security Service.

Резюме

## ТУРЕЦКИЕ РАЗВЕДЫВАТЕЛЬНЫЕ ОРГАНИЗАЦИИ И ГРУППЫ В ГОДЫ КЕМАЛИСТСКОГО ДВИЖЕНИЯ (1919-1923 ГГ.)

Арам С. Саиян  
Канд. ист. наук

**Ключевые слова** - Мустафа Кемаль, «Каракол», «Хамза», Мустафа Февзи Чакмак, «Тешкалат-э Мах-суса», «Аскери Полис», «Теткики», «Гечит».

В статье представлена история создания и деятельности турецких разведывательных организаций и групп в последние годы Османской империи (1919-1923 гг.). После войны в ещё не занятых союзниками вилайетах стали действовать первые турецкие разведывательные группы. Самой сильной из них стала

организация «Каракол», которая просуществовала почти полтора года - вплоть до 16 марта 1920 г., когда войска Антанты вошли в Стамбул и арестовали его руководителей. Оставшиеся на свободе офицеры «Каракола» во главе с подполковником Муглалы Мустафа-беем сформировали «Офицерскую группу», а в феврале 1921 г. его руководитель был вынужден сменить название на «Явуз». В конце концов, Мустафа-бей, чтобы не попасть в плен к англичанам, из Стамбула уезжает в Анкару, и группа перестаёт существовать. Кроме этой группы в Стамбуле и Анатолии были и другие тайные организации, которые действовали самостоятельно.

В мае 1919 г. Мустафа Кемаль начинает свое националистическое движение в Анатолии, и большинство из подобных групп присоединяется к нему. Он, в свою очередь, создает свои разведывательные группы, перед которыми стояли две задачи: борьба с внешним врагом и борьба с силами оппозиции. Борьба с внешним врагом велась по нескольким направлениям: переброска офицеров и оружия с занятых войсками Антанты территорий в Анатолию, борьба с враждебной пропагандой, шпионажем и осуществление разведки. В результате этой деятельности в 1921 г. Кемаль руководил всеми разведывательными организациями и группами. В обязанности групп «Хамза», «Фелах» входили переброска вооружения и офицеров из Стамбула в Анкару и разведывательность в столице и других занятых войсками Антанты областях. А созданная военно-морскими офицерами османского флота организация «Муавенет-и Бахрие» смогла демонтировать с военных кораблей и отправить в Анатолию 1421 единиц вооружения массой 138 тонн.

Весной 1921 г. М. Кемаль и начальник Генштаба кемалистов Февзи Чакмак паша решают создать новую структуру, которая скоординировала бы деятельность всех тайных групп в Стамбуле. Новая организация – «Мюселла Мюдафа-и Миллие» – полностью владела ситуацией в Стамбуле. А после победы над греками осенью 1922 г. Февзи паша создаёт группу «Гечит», которая следила за передвижениями британских войск.

Не менее важной задачей было создание сильной контрразведывательной организации, которой стала «Аскери Полис» - («Военная полиция»). Она боролась не только с британской агентурой, но и с нацменьшинствами и коммунистами. Но вскоре Кемаль начал использовать эту организацию для слежки за высшим офицерским составом и членами оппозиционных партий. Но после разоблачения в парламенте, Кемаль вынужден был под выдуманым предлогом закрыть группу. Через 10 дней на её основе открывается новая организация – «Теттик Хеет-и Амирликлери», которая тоже через некоторое время распускается.

Резюмируя изложенные факты, можно сказать, что после первых неудач кемалистов, в последней фазе войны за независимость уже существовало несколько тайных организаций, которые вполне успешно могли бороться с британской разведкой и сохраняли свое влияние в целых районах Стамбула, и во многих вилайетах Малой Азии, занятых союзниками. Турецкие разведывательные структуры, созданные во время турецко-греческой войны, позже стали основой для создания Службы национальной безопасности Турции.

## REFERENCE

1. **Petrosyan G.**, “Mijankyal” hetakhuzut‘yun. “K‘arak‘oli” derĉ k‘emalakan sharzhman yev t‘urk‘akan hetakhuzut‘yan dzevavorman mej, ěj 123-136, <http://ysu.am/files/4-1540535981-.pdf> (In Armenian).